

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՐ

ԱՂ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

հայկական

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

016:016(47.925)

Մ-11

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

(ՈՒՂԵՑՈՒՅՑ)

A $\frac{\text{II}}{30425}$



ԽճԻՆԱԳՐՈՒԹՅԱՆ և ՄՈՒՇԱՎՐԱԾ
ՌԵԴԱԿՏՈՐ ԻՆՏԵՆՍԻՎՆԻ

Государственная республиканская библиотека Арм. ССР
им. АЛ. МЯСНИКЯНА

Библиография армянской библиографии
(Путеводитель)

Редактор: Р. ИՄՃԱՆՅԱՆ

(На армянском языке)

Ереван 1963

ԱՅՍ ԿՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

(ԻՆՑ Է ՄԱՅՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՆԱԳԻՑՈՒԹՅՈՒՆԸ)

Գույց մի փոքր անսովոր թվա այս գրքի վերնագիրը՝ «Մատենագիտություն հայկական մատենագիտություն», բայց միշտ էլ անսովոր է թվում ամեն մի քիչ գործածվող բառ կամ անուն և սովորական է դառնում, երբ պործածելով ընտելանում ենք նրան:

Իհարկե, ամենից կարևորը ոչ թե գրքի անունն է, այլ էությունը, նպատակը: Ուրեմն նախ նպատակի մասին:

Ավելի քան 450 տարի է, ինչ աշխարհի տարբեր մասերում տպագրվում են հայերեն գրքեր, թերթեր և հանդեսներ: Որքա՞ն է մինչև այսօր հրատարակված հայերեն գրքերի և պարբերականների թիվը: Շատ է, բայց ոչ ոք հաշիվը չի պահել և ոչ ոք չի կարող մի ստույգ պատասխան տալ այդ հարցին:

Մեր մոտավոր հաշվումներով հայ առաջին տպագրությունից սկսած մինչև այսօր հրատարակված հայերեն գրքերի թիվը հասնում է 70 հազար անվան¹, շայ պարբերականների համար մասնագետները տարբեր թվեր են բերում՝ 2000-ից մինչև 4000² անուն: Բայց ամենից շատ են, իհարկե, պարբերա-

1 Գրքերի համար տևուն բառը ասված է ոչ թե մի ստեղծագործության կամ աշխատության իմաստով, այլ՝ մի հրատարակության, այսինքն՝ անուն-հրատարակություն:

2 Մ. Պոտուրյանը 1938-ին հայերեն պարբերականների քանակը համարել է 2800 (տե՛ս նրա «Շայ հանրագիտակը», էջ 4), Ա. Կարինյանը 1956-ին՝ 4000 (տե՛ս նրա «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության»,

կանների էջերում տպագրված հոդվածները, ուսումնասիրութ-
յուններն ու զեղարվեստական գործերը:

Փոքր հայ ժողովրդի տպագիր արտադրանքը բավական մեծ է և, անշուշտ, շատ բազմաբովանդակ: Դա հայկական մշակույթի ամենաարժեքավոր մասն է, որ հնարավորին շափ տվելի լիակատար պետք է ի սպաս դրվի ներկա և հետագա սերունդներին:

Իսկ ո՞րն է այն միջոցը, որով այդ հարուստ գրականութ-
յունը հնարավոր է առավելագույն շափով մատչելի դարձնել
ընթերցողին, ինչպե՞ս կարելի է մասնագետին, գիտնականին,
ամեն մի ընթերցողի տեղնկացնել, թե ինչ գրքեր ու հոդված-
ներ գոյություն ունեն հայերեն լեզվով նրան հետաքրքրող հար-
ցերի մասին:

Այդ փորձված միջոցը մատենագիտությունն է, բիրիո-
գրաֆիան, այսինքն՝ գրքերի և պարբերականների, նրանց մեջ
տպված հոդվածների տարբեր տեսակի ցուցակները:

Մատենագիտությունն է, որ ի մի է հավաքում այս կամ
այն լեզվով եղած, տարբեր հարցերի նվիրված և կամ տվյալ
ժամանակամիջոցում իրատարակվող գրականությունը ու
հնարավորություն տալիս ընթերցողին կողմնորոշվելու գրքա-
յին անսպառ ծովի մեջ:

Մեր ժամանակներում, երբ ամեն օր աշխարհում հսկա-
յական քանակությամբ տարբեր լեզուներով գրքեր ու պարբե-
րականներ են լույս տեսնում, շատ է մեծացել մատենագիտու-
թյան դերը: Ներկայումս մեծ թվով ամենատարբեր կառուց-
վածքի և ընդգրկման մատենագիտական ցանկեր են իրատա-
րակվում ամենուրեք: Այնպես որ շատ ժողովուրդների մոտ
վաղուց պահանջ է առաջացել ունենալ մատենագիտական
ցանկերի ուղեցույց կամ ցանկերի ցանկ, մատենագիտության
մատենագիտություն (բիրիոգրաֆիայի բիրիոգրաֆիա), իսկ

Հ. 1, էջ 8), 2. Պետրոսյանը 1957-ին՝ 2000 (տե՛ս նրա «Հայ պարբերական
ժամույրի բիրիոգրաֆիան», Հ. 2, էջ 1X), Ն. Գասպյանը 1961-ին՝ 3000
(տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1961, Մ 3—4, էջ 318): Մեզ
թվում է, որ նշտին ամենից մտքը այս վերջին թիվն է:

որոշ ժողովուրդներ արդեն ունեն այդ կարգի արժեքավոր ձեռնարկներ:

Մատենագիտության մատենագիտությունը, որ կոչվում է նաև երկրորդ աստիճանի մատենագիտություն¹, օրավար



Հայ նշանավոր մատենագետ
Արսեն Ղազիկյան

ավելի մեծ տարածում է գտնում: Ժամանակակից ամեն մի մասնագետի, ընթերցողի կամ ուսումնասիրողի պետք է լինում իմանալ, թե ինչ մատենագիտական ցանկեր կան, որ կարող

¹ Այն իմաստով, որ եթե գրականության որևէ ցանկ առաջին աստիճանի մատենագիտություն է, ապա ցանկերի ցանկը երկրորդ աստիճանի է:

և ն իրեն օգնել անհրաժեշտ գրականություն ընտրելու կամ հարկ եղած տեղեկանքներն ստանալու համար: Մատենագիտություն մատենագիտությունն է, որ հնարավորություն է առաջարկում մամանալու իրենց անհրաժեշտ գրականություն ցանկերի գոյություն մասին:

Հայերեն լեզվով գրականություն մատենագիտական ցանկերն ու աշխատությունները զգալի քանակ են կազմում և արդեն ժամանակն է նրանց ի մի բերել. կազմել նրանց ցանկը: Հայոց մեջ դրա կարիքը հատկապես զգացվում է նաև այն պատճառով, որ տարրեր ժամանակներ տարրեր երկրներում լույս տեսած լինելով՝ հայկական մատենագիտական ցանկերի մի զգալի մասը այսօր անծանոթ է մեր ընթերցողներին: Մենք շատ անգամ գրադարաններում ականատես ենք եղել, քն ինչպես է այս կամ այն մասնագետ ընթերցողը զարմանքով և ուրախությամբ ընդունում իրեն հրամցված անհրաժեշտ մատենագիտությունը, որը կարող է պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Ճիշտ է, մի շարք արժեքավոր մատենագիտական ցանկեր և աշխատություններ այսօր դժվար է գտնել, սակայն եթե ընթերցողն իմանա գոնե դրանց գոյություն մասին, կարող է հետապնդել ու ի վերջո գտնել իրեն անհրաժեշտ մատենագիտությունը և:

Ահա ներկա գիրքը կամ ձեռնարկը նպատակ ունի ընթերցողին ներկայացնել հայ մատենագիտական ամենատարրեր ընդլայնել ցանկերն ու աշխատությունները: Ուրիշ խոսքով ասած, ներկա ձեռնարկը հայ մատենագիտության ուղեցույցը կամ բանալին լինելու նպատակ ունի:

1 Երևանի խոշոր և առավել հարուստ գրադարաններում, ինչպես Այ. Մյասնիկյանի անվան հեռալին գրադարանում, Մաշտոցի անվան Մատենադարանում, Գիտությունների ակադեմիայի և Համալսարանի կենտրոնական գրադարաններում հավաքված են հայկական մատենագիտական կարգավորության հրատարակությունները, իհարկե, որոշ զեղծերում այդ գրադարանները մեկը մյուսին լրացնում են, այսինքն՝ մի տեղ չեղածը կորելի է գտնել մյուսում:

Գիրք, գրադարան, մատենագիտություն,— սրանք ծնվում
և ապրում են միասին:

Հայկական մատենագիտությունը բավական հին է, հնա-
դույնը մեր Միություն մեջ: Այն ծագել է մեծօրոպատառ գրքերի
ստեղծման ու տարածման ժամանակներում (այդ նույն շրջ-
անում էլ Հայաստանում հիմնվեցին մի շարք գրադարաններ):

Հայերեն հնագույն մատենագիտական ցանկերը եղել են
հայ եկեղեցու կողմից մերժվող գրքերի ցուցակները, «գաղտ-
նի», «սուտ» կամ «ծածուկ գիրք» անուններով, ինչպես և այս-
պես կոչված «արտաքին» (այսինքն՝ քրիստոնեական, եկեղե-
ցական գրքերի շարքը անմիջականորեն չդասվող) գրքերի
ցուցակները: Այնուհետև միջնադարում կազմվել են նաև այլ
կարգի գրքերի և հեղինակների մատենագիտական բնույթի
ցանկեր, գրացուցակներ և այլն:

Հայկական մատենագիտության նոր շրջանը սկսվում է
1883 թվից՝ Գարեգին Զարբհանալյանի «Հայկական մատենա-
գիտության» հրատարակությամբ: Գրանից հետո մինչև մեր
օրերը հրատարակվել են զգալի քանակությամբ մատենագի-
տական գործեր, որոնց մեջ կան շատ արժեքավորները:

Ներկա ձեռնարկում իմաստ չունեցող նշել «գաղտնի» կամ
«սուտ», «արտաքին», ինչպես և «լայն» ու «նուրբ» կոչվող
գրքերի ցուցակները, որոնք պահպանվել են ձեռագրերի մեջ:
Այսօր դրանք մեր ընթերցողին օգտակար լինել չեն կարող և
զուտ պատմական արժեք ունեն: Կարելի է բավարարվել նրա-
նով, որ այդ ցանկերի պահպանված բնագրերը բերված են
Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն» մեծարժեք աշ-
խատության ներածության մեջ և Մատենագիտական բնագրեր
բաժնում:

Մատենագիտական բնույթի հին հայերեն աշխատություն-
ներից հարմար համարվեց նշել միայն Գրիգոր Արասյանի
«Գիրք պատճառացր» (13-րդ դար), այն էլ ոչ թե գործնական
նպատակով, այլ խորհրդանշական:

Ներկա ձեռնարկում նշված ամենահին տպագիր մատենա-

գիտութիւնը իտալացի տպագրիչ Անտոնիո Բարտոլիի հրատարակած հայերէն գրքերի մի ցուցակ է, որ տպագրվել է 1710 թվին Եաշատուր էրզրումէցու «Բանք և քարոզք» գրքի Ա հատորի վերջում¹։ Կոչվում է Շարարադայիւն, եւ ցուցակ զոց. որք գտանին մեծագունի քունով առ Անտոնիոս Պօրթոլի տպագրիչն ի Վենետիկ. ի սուրբ Մարիամ ֆօնձօզա ի Քալլէ լօնգա ի ներկայի ամի 1710 (տե՛ս Ենթկա ձեռնարկի Հրատարակչական գրացուցակներ բաժնում)։ Սա այսօրվա բմբրոն-մամբ տպագիր մատենագիտութիւն մեր իմացած հնագոյն նմուշն է. որ, անշուշտ, կազմված է իտալացի տպագրիչի մտաշխատող մի հայի ձեռքով։

Այս գրացուցակն արդէն գործնական հետաքրքրութիւն ունի այսօրվա ընթերցողի՝ պատմաբանի, գրականագետի, մատենագետի համար. նրա շնորհիվ, օրինակ, կտրելի է իմանալ այնպիսի մոռացված գրքերի մասին, որոնք կարող են օգտակար լինել այդ մասնագետների աշխատանքում։

Ի դեպ, մեծ մասամբ այսպիսի օգտակարութիւն ունենան մյուս գրացուցակները։ Ժամանակին գործած մի շարք գրադարաններ և հրատարակչութիւններ այժմ չկան։ Նրանց գրացուցակներն այսօր մի օգտակարութիւն ունեն, որ հիշեցնում են տարբեր ժամանակներում տպագրված տարբեր բնույթի հայերէն գրքերի գոյութիւն մասին։

Ներկա մատենագիտութիւն համար Եյութեր բնտրելիս հիմնական սկզբունքը եղել է՝ վերցնել միայն հայերէն զօրէն-րի, պարբերականների, հողվածների (և ձեռագրերի) մատենագիտական ցանկերն ու աշխատութիւնները։ Հայերէն հրատարակչութիւնների ցանկերը, պարզ է, որ հայատառ են լինում։ Բայց երբեմն պատահում են ցանկեր, որոնց մեջ հայերէն հրատարակչութիւնները նկարագրված են ռուսական կամ յատիւնական տառերով և կամ հայերէն գրքերի ու հողվածների անուններն ուղղակի տրված են թարգմանված, այլ լեզուներով²։ Այդպիսի ցանկերը, ինչ խոսք, նույնպէս բնագրկված են

¹ Մաշտոցի անվ. Մատենադարան, Հետախոյ գրքերի հաշվառման. Պ.Մ. 1404, 1405, 1654։

² Երբեմն հայերէն հրատարակչութիւնների այդպիսի թարգմանական

ներկա մատենագիտական ուղեցույցի մեջ որպես հայկական մատենագիտության նմուշներ:

Այդպիսով, ներկա ձեռնարկում հայկական մատենագիտության անվան տակ ըմբռնվել է հայերեն գրքերի մատենագիտություն: Կան մատենագիտական ցանկեր, որոնցում ընդգրկված է տարբեր լեզուներով գրականություն: Այդ ցանկերից այնպիսիք, որոնց մեջ նշված է գոնե մեկ-երկու հայերեն գիրք կամ հոդված, գիտվել են որպես հայկական մատենագիտության նմուշներ:

Հայերի մասին, բայց ոչ հայերեն լեզվով գրքերի, այսինքն՝ հայագիտական, բայց միայն օտար լեզուներով գրականություն ցանկերը, ինչպես և Հայաստանում հրատարակված, բայց ոչ հայերեն գրականության ցանկերը ներկա ձեռնարկում տեղ չեն գտել¹, չհաշված մի քանի բացառություն: Օրինակ, բացառության կարգով դրված է Սալմասյանի «Bibliographie de l'Arménie»-ն որպես կարևոր հայագիտական մատենագիտություն կամ նշված է Հայաստանում Ալ. Մյասնիկյանի անվ. գրադարանի կողմից հրատարակված «Что чи-

մատենագիտությունները պատճառաբանված են լինում, բայց պատահում են նաև այդ կարգի անտեղի հրատարակություններ: Անհասկանալի է, օրինակ, թե ինչու՞ Հայկական գիտությունների ակադեմիայի հրատարակությունների մատենագիտությունը նույն ակադեմիայի կենտրոնական գրադարանը հայերեն չի կազմել, բոլոր հայերեն գրքերն ու հոդվածները այնտեղ նկարագրված են միայն ռուսերեն թարգմանությամբ: Տե՛ս Библиография изданий Академии наук Армянской ССР. Ереван, 1950 և Библиография изданий Армфана и Академии наук Армянской ССР, 1936—1956. Ереван, 1957. Ժիշտ են վարվել վրացի մատենագետները վրացական ակադեմիայի հրատարակությունների մատենագիտությունը հրատարակելով վրացերեն, միաժամանակ թալսվ վրացերեն գրքերի ռուսերեն և ռուսերեն գրքերի վրացերեն նկարագրությունները:

¹ Երբեմն հայկական մատենագիտության տակ փորձում են հասկանալ նաև ոչ հայերեն լեզվով հրատարակված գրականության ցանկեր այն պատճառաբանությամբ, որ նրանք հայագիտական բնույթի են կամ, որ սպառըրվել են Հայաստանում: Կարծում ենք, որ դա ճիշտ չէ: Ամեն մի ժողովրդի ազգային մատենագիտությունը տարբեր սահմաններով և յուրովի բնույթով է ըմբռնվում: Հայկական մատենագիտության տակ ամենից ճիշտ է հասկանալ հայերեն լեզվով գրականության մատենագիտությունը:

ԿԱԾԵ ՍՈ ՏԵԽՆԻԿԵՅ գրականության ցանկը որպէս առանձին պրակներով տպագրված մատենագիտություն: Այդպիսի բացառութիւն է նաև Ն. Արղունիանի գրապարանի գրացուցակի (ուր ոչ մի հայերէն գիրք չի տրված) նշումը ներկա ձեռնարկում և այլն:

Նյութերի ընտրության ժամանակ հաշվի է առնվել նաև ցանկերի հրատարակման ձևը:

Մատենագիտությունը բոստ հրատարակման ձևի լինում է. ա) առանձին գրքով հրատարակված, բ) պարբերական, երբ ողջ պարբերականը մատենագիտություն է լինչպես՝ «Գրքի տարեգիրը», «Լրագրային հոդվածների տարեգիրը» և այլն). գ) ներգրգային, այսինքն՝ որևէ ռուսամասերության կամ այլ գրքի կից մատենագիտություն (մեծ մասամբ վերջում). դ) ներպարբերական, այսինքն, Լրբ այս կամ այն առանձին մատենագիտությունը տպագրվում է որևէ հանդեսի կամ թերթի մեջ, ե) տողատակի, երբ որևէ գրքի կամ հոդվածի տողատակերին նշված աղբյուրները մատենագիտության նշանակություն են ստանում, զ) ներհոդվածային, այսինքն որևէ ժողովածուի կամ պարբերականի մեջ տպված հոդվածի վերջում եղած մատենագիտություն:

Ներկա ձեռնարկում բոլորովին չեն բնդգրկված տողատակի և ներհոդվածային ցանկերը: Հայերէն գրականության ներհոդվածային ցանկերը որպիս սրենք շափազանց համառոտ են¹ (չնչին բացառությամբ), թեև, ճիշտն ասած, այդ ցանկերի ընդգրկումը ինչ-որ չափով կհարստացնէր ճշուդային մատենագիտության մի շարք բաժինները: Իսկ տողատակի մատենագիտությունները վերցնել բոլորովին անիմաստ է, քանի որ կատարյալ շփոթ կստեղծվեր ձեռնարկում. անհամար են տողատակերին աղբյուրների առաջիկ կամ պակաս նշումներ ունեցող գրքերն ու հոդվածները, նրանց ընդգրկումը երկրորդ

¹ Բնիտոսական ՍՍՌ ազգային մատենագիտության մեջ (հրատ. 1963թ.) ներհոդվածային մատենագիտությունն ընդգրկվել է: Գուցէ ներկա հեռնարկի մի նոր հրատարակության ժամանակ նախաձեռն լինի նրանում նույնպիս ընդգրկել հայերէն ներհոդվածային ցանկերը:

աստիճանի մատենագիտութեան մեջ հազիվ թե որևէ բան տար ընթերցողին, դրանով ծանրաբեռնվածութիւն կատեղծվելու Եվ առհասարակ տողատակին նշված աղբյուրները պայմանական առումով են մատենագիտութիւն: Մյուս ձևի մատենագիտական ցանկերը ձեռնարկում ընդգրկվել են այս առաջաբանում նշված վերապահումներով:

Որքան էլ լավը լինի մատենագիտութեան սահմաններն ու բնույթը որոշող ծրագիրը, որ կազմվում է նախօրոք, միևնույն է, նյութերն ընտրելիս նոր կասկածներ ու բարդութիւններ են առաջանում: Վերցնենք այսպիսի մի հարց: Որոշ գիտական ուսումնասիրութիւնների կամ ժողովածուների մեջ օգտագործված աղբյուրները նշվում են պայմանական նշաններով կամ համառոտագրութեամբ (մեծ մասամբ սկզբնատառեր) և զրքի վերջում տրվում են այդ համառոտագրութիւնների բացատրութիւնները (այսինքն՝ ամեն մի պայմանական համառոտագրութեան դիմաց տրվում է համապատասխան զրքի կամ հոգվածի անունը):

Հարց է առաջանում, այդպիսի ցուցակները նույնպէ՞ս մատենագիտութիւն են, թե ոչ: Ե՛վ այո, և՛ ոչ: Հաճախ այդ կարգի ցանկերը մատենագիտական արժեք չեն ունենում: Օրինակ, լեզվաբանական ուսումնասիրութիւններում որպէս լեզվական այս կամ այն իրողութեան նմուշ բերվում են տարբեր հեղինակների խոսքից օրինակներ, ամեն մի օրինակի կողքին նշվում է աղբյուրի համառոտագրութիւնը, ապա առանձին տրվում է համառոտագրութիւնների բացման ցանկը: Այդպիսի ցանկի մեջ հավաքված են տարբեր գրողների ու բանաստեղծների ստեղծագործութիւնների անուններ, որոնցից լեզվական օրինակներ է բերել ուսումնասիրութեան հեղինակը: Դա ըստ էութեան ցույց է տալիս, թե որ գրողների խոսքից են բերված օրինակները ուսումնասիրութեան մեջ, մի հանգամանք, որ մատենագիտական առանձին հետաքրքրութիւն ունենալ չի կարող: Այդ կարգի ցանկեր ընդգրկել երկրորդ աստիճանի մատենագիտութեան մեջ իմաստ չունի:

Բայց կան նաև համառոտագրութիւնների այնպիսի ցանկեր, որոնք իսկական մատենագիտութեան բնույթ ունեն, ուր

ըստ էութեան ընդգրկվել է որոշակի թեմայի կամ բնագավառի գրականութուն: Օրինակ, վերցնենք Մ. Օրմանյանի «Ազգայատու մի» վերջում տրված «Ազգայատու մի երեք մասերու մեջ չիշված հեղինակներ» ցանկը, որ բերված է չայոց պատմությանը վերաբերող մեծ քանակությամբ արժեքավոր գրականություն կամ Ա. Ղանայանյանի «Առածանիք» վերջում տրված «Համառոտություններ ազգայութեան» ցանկը, որ փաստորեն հայ բանահյուսական և, մասնավորապես, առածագրական գրականության ամենահարուստ մատենագիտությունն է:

Այսպիսի տարրեր տեսակ չանցամասններ են նկատի առնված չայական այս երկրորդ աստիճանի մատենագիտության համար նյութերը ընտրելու ժամանակ:



Կարող է հարց առաջանալ նաև, թե ինչու են երկրորդ աստիճանի այս մատենագիտության մեջ ընդգրկվել այնպիսի նյութեր, ինչպես, ասենք, հայ տպագիր զբի կամ հայ պարբերական մամուլի պատմությանը նվիրված աշխատություններն ու հոդվածներն են:

Պատճառն այն է, որ հաճախ այդ կարգի աշխատությունների մեջ մատենագիտական այնպիսի տեղեկություններ են լինում, որոնք չկան և ոչ մի ցանկում: Ինչպես՝ կարելի էր ներկա ձևով հիշողությունը թողնել, օրինակ, Ա. Երիցյանի «Պատմական տեսություն հայ տպագրության» գիրքը, Թեոդիկի «Տիպ ու տառը» կամ Գ. Լեոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը», «Բազմավայր», «Հանդես ամսօրյայի», «Բանասերի» և այլ պարբերականների մի շարք մեծարժեք հոդվածներ հայ տպագրության պատմության վերաբերյալ: Տպագրության պատմությանը նվիրված մի շարք հոդվածներ հաճախ նույնիսկ դժվար է տարբերել մատենագիտական ցանկից: Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ հայերեն մատենագիտություն հասկացողությունը մի բի: ավելի լայն է նվրդական բիրլիոգրաֆիայից, և այն, ինչ բիրլիոգրաֆիա չի

համարվում, ինչ-որ շարժում մատենագիտութուն է, բայց այդ մասին քիչ հետո:

Պետք է նկատի ունենալ միաժամանակ, որ հայ գրքի և մամուլի պատմությանը նվիրված աշխատություններն ու հոդվածները ներկայացված են ընտրովի, գլխավորապես այնպիսիք, որ մատենագիտական ուշագրավ տեղեկություններ են պարունակում: Մի շարք հոդվածներ, նվիրված հայ գրքի կամ մամուլի պատմությանը նման տեղեկություններ չպարունակելու պատճառով դուրս են բողնվել ներկա ձեռնարկից:

Ձեռնարկում ներկայացված են նաև մի քանի անտիպ մատենագիտական ցանկեր, որոնք պետք է լույս տեսնեն այս կամ հաջորդ տարվա մեջ: Բացի այդ, ներկա ձեռնարկը կազմելու աշխատանքների ընթացքում հավաքվեցին նաև զգալի քանակով ուրիշ անտիպ մատենագիտական ցանկերի անուններ: Դրանցից մի քանիսի մասին տեղեկություններ են տրված գրքերի և պարբերականների մեջ, ինչպես օրինակ, Գաֆթանյանի ընդհանուր մատենագիտական ցանկը (Պետդիկ, Տիպ ու տառ, էջ 30), Գալեմթյարյանի կազմած հայերեն հնատիպերի ցանկը (սՄշակ, 1912, № 50) և այլն: Ավելի շատ են անտիպ ձեռագրացուցակները (այդ թվում ձեռագրերի հիշատակարանների ժողովածուները)¹: Դրանց մի մասը վաղուց է կազմված և գտնվում է տարբեր մատենադարաններում ու դիվաններում (ինչպես, օրինակ, Մաշտոցի անվ. Մատենադարանում, Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմ. թանգարանի դիվանում, Վենետիկի և Վիեննայի Մխիթ. մատենադարաններում, Երուսաղեմի հայոց մատենադարանում և այլն), շատերն էլ գտնվում են կազմողների մոտ: Որոշ ձեռագրացուցակներ էլ ներկայումս են կազմվում հրատարակության համար: Անտիպ մատենագիտական ցանկերը, այդ թվում ձեռագրացուցակները շատն ներկա ձեռնարկի մեջ (չնաշված մի երկու բացառու-

¹ Անտիպ են մնում, օրինակ, Ղ. Ալիշանի, Ն. Ակիևյանի, Գ. Գալեմթյարյանի, Ծ. Լալայանի, Ս. Հակոբյանի, Կ. Ղաֆադարյանի, Վ. Մանկունու, Վ. Մխաթաճյանի, Հ. Շախաբունյանցի, Տ. Պալյանի, Ս. Պոտոլյանի, Ս. Խաչատրյանի, Ս. Տեր-Ավետիսյանի, Հ. Քյուրտյանի, Ս. Քուլանջյանի և այլոց կազմած մի շարք արժեքավոր ձեռագրացուցակներ:

թշուհ) խմբագրից տեղախ պատճառներով: Անտիպ ձեռագրացուցակների ցանկը այժմ գտնվում է Ալ. Մյասնիկյանի տեղ. գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժնի հայագիտական բաժանմունքում. ցանկացողները կարող են օգտվել այնտեղ:

Մատենագիտական անտիպ ցանկերի մի տեսակն էլ գրադարանների քարտային գրացուցակներն են (գրադարանային կատալոգներ) և տարբեր տեսակի թեմատիկ քարտարանները:

Հայերեն գրքերի խոշոր և արժեքավոր քարտային գրացուցակներ կան Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում, Հայկական ՍՍՌ ԳԱ, Երևանի համալսարանի գրադարաններում. Մատենագրանի տպագիր գրականությունն էլ, ինչպես և ԱՎ. Իսահակյանի անվան Երևանի քաղաքային կենտրոնական ու մի շարք այլ գրադարաններում: Սակայն եթե գրադարանային տպագիր գրացուցակները հեշտ է ընդգրկել երկրորդ աստիճանի մատենագիտության մեջ, ապա քարտային գրացուցակների մասին նույնը ասել չի կարելի¹, այդպիսի ոչ մի գրացուցակ տեղ չի գտել երկրորդ աստիճանի այս մատենագիտության մեջ:

Երևանի գրադարանների քարտային գրացուցակների համար կարելի է կազմել մի առանձին տեղեկատու, որի միջոցով հնարավոր լինի անհրաժեշտ տեղեկություններ ստանալ Երևանում եղած լավագույն գրացուցակների, նրանց ծավալի, կազմության և այլ հատկանիշների մասին, բայց նշել դրանք երկրորդ աստիճանի մատենագիտության մեջ իմաստ չունի:

Պե՞տք էր արդյոք ծանոթագրել (տալ անոտացիաներ) ներկա ձեռնարկի մեջ ընդգրկված նյութերը, թե՞ ոչ: Սա նույնպես վիճելի հարց է: Կարելի էր, իհարկե, յուրաքանչյուր նշված մատենագիտական ցանկի տակ երկու խոսքով տալ նրա բնորոշումը. բայց արդյո՞ք դրանից ավելորդ ծանրաբեռնվածու-

¹ Այլ բան է տպագիր հրատարակվող քարտերի հարցը, ինչպես, օրինակ, Հայաստանի պետ. գրադարանի տպագիր քարտերը, որոնք սրբվա մատենագիտական շարունակվող հրատարակություն կարողացած են ներկա մատենագիտության մեջ:

թյուն շէր ստեղծվի: Օրինակ, ինչի՞ նման կլինեն հրատարակչական ու գրավաճառային (ասենք՝ Հայպետհրատի կամ Հ. Սամվելյանի գրատան) բոլոր պրացուցականները մեկ-մեկ ծանոթագրել. նման ծանոթագրությունները պետք է կրկնեն միմյանց՝ ոչինչ շտալով ընթերցողին: Քեւ, իհարկե, որոշ նյութերի ծանոթագրումը կարող էր օգտակար լինել: Գրափոխարեն ձեռնարկում յուրաքանչյուր նշված մատենագիտության տակ տրվում են նրան նվիրված գրախոսությունները, եթե այդպիսիք եղել են կամ հայտնւբերվել:



Մատենագիտական ցանկերը տարբեր սկզբունքներով կարելի է խմբավորել: Բայց ամենից ավելի ընդունված է տարբերել մատենագիտության երկու հիմնական տեսակներ՝ ընդհանուր և ճյուղային: Ընդհանուր ասելով հասկանում ենք այնպիսի մատենագիտական ցանկեր, որոնց մեջ ընդգրկված են գիտության ու մշակույթի տարբեր ճյուղերի նվիրված գրքեր, հոդվածներ, պարբերականներ: Ժյուղային կամ բնագավառային մատենագիտությունն այն է, երբ ցանկի մեջ նշված է գիտության կամ մշակույթի մի որևէ ճյուղի վերաբերող գրականություն:

Օրինակ, ընդհանուր մատենագիտություններ են Գ. Զարբհանալյանի և Ա. Ղազիկյանի հայտնի մատենագիտական աշխատությունները, որոնք ընդհանրապես հայերեն գրքերի ցանկեր են և ընդգրկում են տարբեր գիտությունների և հարցերի նվիրված գրականություն:

Նույն բնույթի է Հայաստանի Գրապալատի կողմից հրատարակվող «Գրքի տարեգիր» մատենագիտական պարբերականը, ուր գրանցվում են Հայաստանում լույս ընծայվող բոլոր բնագավառների և հարցերի նվիրված գրքերը, այդպիսիք են նաև «Լրագրային հոդվածներին» և «Ժուռնալային հոդվածներին» տարեգրերը:

Ահա ներկա մատենագիտության առաջին բաժնում հավաքված են հայերեն ընդհանուր մատենագիտական ցանկերը,

արոնց մեջ նշված է տարբեր բնագավառների և հարցերի նվիրված գրականություն:

Ծրկրորդ բաժնում տրված են ճյուղային մատենագիտական ցանկերը: Այդպիսիք էն, օրինակ, Հայաստանի գրապայատրկողմից հրատարակվող («Պրքի տարեգրին» կից) «Կերպարվեստի տարեգիրը», «Ծրածշտական գրականություն տարեգիրը»: Առանձին գրքերով հրատարակված ճյուղային մատենագիտական ցանկեր են, ասենք, «Հայկական ՍՍՌ գյուղատնտեսական գրականության բիրիոգրաֆիան», Հ. Պետրոսյանի «Հայ գրականության բիրիոգրաֆիան», Մ. Բարայանի «Սինթետիկ նյութեր և դրանցից պատրաստվող առարկաներ» մատենագիտական ցանկը և այլն:

Ճյուղային շատ արժեքավոր մատենագիտական ցանկեր կան զանազան գիտական ուսումնասիրությունների կամ ժողովածուների մեջ, ինչպես, օրինակ, Հ. Մանանդյանի «Տնտեսագիտության հիմնական տերմինները» կամ «Տիգրան Բ և Հոսմը» գրքերին կից մատենագիտությունները, Ա. Բարայանի «Պուշկինը հայ գրականության մեջ» մատենագիտությունը «Պուշկինին» ժողովածուում և այլն:

Ծրբեմն բավական դժվար է որոշել մատենագիտությունը ընդհանուր է, թե ճյուղային: Վերցնենք, օրինակ, Հ. Անասյանի «Հայկական մատենագիտությունը», Առաջին հայացքից թվում է, թե դա ընդհանուր մատենագիտություն է, քանի որ ընդգրկում է պատմություն, գրականություն, լեզվաբանություն, փիլիսոփայություն և այլն: Սակայն, այնուամենայնիվ, դա ընդհանուր մատենագիտություն չէ, բառի իսկական իմաստով, քանի որ այնտեղ ընդգրկվածը վերաբերում է հայոց պատմությանը, հայ գրականությանն ու լեզվին և ընդհանրապես հայկական հին մշակույթին, այսինքն, դա նախ հայագիտությանը օժանդակող մատենագիտություն է, կամ ուղղակի հայագիտական մատենագիտություն և ապա նոր՝ ընդհանուր: Ուստի և այդ աշխատությունը դրված է ճյուղային մատենագիտության բաժնի Ընդհանուր հայագիտական մատենագիտություն գլխում և միայն լրացուցիչ նշված է Ընդհանուր մատենագիտություն բաժնում:

Ճյուղային մատենագիտութեան մեջ են մտնում նաև այս կամ այն բնագավառի ներկայացուցիչ գործերի և նրա մասին եղած գրականութեան մատենագիտական ցանկերը: Օրինակ, ասենք, Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի հրատարակած «Հովհաննես Թումանյան», «Ալեքսանդր Շիրվանզադե», «Ակսել Բակունց», «Եղիշե Զարենց», «Կոմիտաս», «Կարա-Մուրզա», «Մակար Եկմալյան» և մյուս այսպիսի մատենագիտական ցանկերը ճյուղային են: Նույն տեսակից են հայ մի քանի գիտնականների մատենագիտությունները հրատարակված Հայկական գիտությունների ակադեմիայի կենտրոնական գրադարանի կողմից («Հրաշյա Հսկորի Աճառյան», «Վիկտոր Համադասպի Համբարձումյան», «Գրիգոր Այվազի Ղափանցյան», «Яков Амазаспович Манандян»¹ և այլն):

Սակայն այս կարգի ցանկերը ճյուղային լինելուց բացի նաև անհատական են, այսինքն՝ նվիրված են մի անհատի: Դա կարևոր հանգամանք է: Շատ հաճախ ընթերցողին, ուսումնասիրողին հատկապես հետաքրքրում է այս կամ այն գրողի, գիտնականի մատենագիտությունը:


Անհատական մատենագիտությունները (պերսոնալիաներ) փաստորեն մի ինքնուրույն տեսակի մատենագիտական ցանկեր են և այդ է պատճառը, որ ներկա ձևոնարկի երրորդ բաժինը նվիրված է դրանց: Միաժամանակ այդ բաժնի յուրաքանչյուր անհատական մատենագիտություն լրացուցիչ կերպով նկարագրված է գիտության կամ մշակույթի այն բաժնում, որին վերաբերում է:

Այսպես, օրինակ, Թումանյանի մատենագիտությունը Անհատական մատենագիտություն բաժնից բացի ներկայացված է նաև ճյուղային մատենագիտություն բաժնի Հայ գրականության մատենագիտություն գլխում:

Կան այնպիսի մատենագիտական խոշոր աշխատություն-

11
 5046

¹ Անհասկանալի է, թե ինչու Ակադեմիայի գրադարանը Մանանդյանի մատենագիտությունը ևս որպես հայ գիրք չի հրատարակել:



ներ, որոնց կազմի մեջ մտնում են մի շարք անհատական մատենագիտություններ, ինչպես, օրինակ, Հ. Պետրոսյանի մածածավալ աշխատությունները, Հ. Անասյանի սշայեական մատենագիտությունը և այլն: Գրանք արդեն ոչ թե անհատական, այլ շատ անհատների նվիրված, եթե կարելի է ասել, խմբական մատենագիտություններ են և շեն տրվում ԱՆՏԱՏԱԿԱՆ մատենագիտություն բաժնում: Սակայն յուրաքանչյուր այդպիսի ծավալուն մատենագիտական աշխատության նկարագրության տակ բովանդ. բառից հետո թվարկվում են այն անձինք¹, որոնց մատենագիտությունը տեղ է գտել աշխատության մեջ: Նույն անձանց անունները մտել են ներկա ձեռնարկի անվանացանկի մեջ:

ԱՆՏԱՏԱԿԱՆ մատենագիտություն բաժնում տրված են միայն մի անհատի նվիրված մատենագիտական ցանկերը տպված առանձին գրքով կամ որևէ գրքի ու պարբերականի մեջ:

Մատենագիտության մի առանձին տեսակ են կազմում սուպադիւր գրացուցակները (կատալոգները): Գրանք մեծ մասամբ ընդհանուր մատենագիտության բնույթ են ունենում, քանի որ նրանց մեջ սովորաբար ընդգրկված են լինում գիտության ու մշակույթի տարբեր բնագավառների նվիրված գրքեր: Սակայն գրացուցակները մատենագիտություն են որոշ վերապահումով: Բուն մատենագիտության ու գրացուցակի հիմնական տարբերությունն այն է, որ մատենագիտությունը ընդգրկում է իրեն վերաբերող գրականությունը անկախ այն բանից, թե որտեղ, որ գրադարանում ևն գտնվում կամ ով է տպագրել թվարկվող գրքերը, պարբերականներն ու հոդվածները, մինչդեռ գրացուցակը օրև կոնկրետ գրադարանում հավաքածուի (գրադարանի, գրատան) կամ մի առանձին նրատարակչության լույս ընծայած գրականության ցուցակ է: Լինում են նաև մի քանի գրադարանների միացյալ գրացուցակներ, որոնք դարձյալ կոնկրետ, որոշակի հավաքածուի (մի քանի գրադարանների) գրականություն են նշում:

¹ Թվարկությունից դուրս են մնում այն անձանց անունները, որոնց վերաբերյալ միայն մեկ-երկու գիրք կամ աղբյուր է նշվում:

Ձեռագրացուցակներն էլ մեծ մասամբ մյուս գրացուցակների նման պարունակում են այս կամ այն կոնկրետ հավաքածուի (հավաքածուների) ձեռագրերը: Այդ նկատառումով էլ գրացուցակներն ու ձեռագրացուցակները հավաքված են ներկա ձեռնարկի մի առանձին (չսրբորդ) բաժնում:

Գուցե հայերեն ձեռագրացուցակները կարելի էր դիտել նաև իրրև ճյուղային, հայագիտական մատենագիտություն և դնել այդ բաժնում: Սկզբում այդպես էլ ծրագրված էր անել, սակայն պարզվեց, որ դա ճիշտ չի լինի, քանի որ հայ ձեռագրերը ժամանակին գրվել և ընդօրինակվել են ոչ իրրև հայագիտական նյութեր: Նրանք եղել են ժամանակի բազմաճյուղ հայ գրականությունը (մատենագրությունը), իսկ հայ ձեռագրերի հավաքածուները և նրանց ներկայացնող ձեռագրացուցակները մեծ մասամբ ընդգրկում են գիտության ու մշակույթի տարրեր բնագավառների ձեռագրեր:

Ձեռագրացուցակներից քչերը ճյուղային մատենագիտության բնույթ ունեն (ինչպես, օրինակ, Վ. Քորգոմյանի «Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքին» կամ Լ. Հովհաննիսյանի «Армянские медицинские рукописи...» և այլն):

Ներկա մատենագիտության Ձեռագրացուցակներ գլուխը ամբողջական պահելու համար այդ ճյուղային ցուցակները մեծ մասամբ գրված են մյուս ձեռագրացուցակների հետ, բայց լրացուցիչ արտացոլված են նաև Ճյուղային մատենագիտություն բաժնի համապատասխան գլուխներում:

Միայն մի քանի ճյուղային բնույթի ձեռագրացուցակներ շեն տրված Ձեռագրացուցակներ գլխի մեջ և արտացոլված են ըստ բնագավառի համապատասխան տեղերում: Դրանք հիմնականում ձեռագրերի այն ոչ մեծ ցանկերն են, որոնք կազմում են մի ամբողջական տպագիր գրականության ցուցակի մասը, ասենք օրինակ, Պաղտասար Դպիրի մատենագիտության մեջ (Ա. Մնացականյանի և Շ. Նազարյանի կազմած) բացի տպագիր գրքերից նշված են նաև ձեռագրեր: Այդ կարգի մի քանի փոքր ցանկեր Ձեռագրացուցակներ բաժանմունքում արտացոլելու անհրաժեշտ շահամարվեց և տրվեց միայն ճյուղային մատենագիտության համապատասխան գլխում:

Հայ գրքի և մամուլի պատմութիւնը նվիրված այն աշխատութիւնները, որոնք մատենագիտական ակնհայտ արժէք ունեն, անշուշտ, նույնպէս բնորոշուող են (և ալ ճշուգային)։ Մակայն այդ նյութերին որքան էլ մատենագիտութիւնը անտեսութեամբ ճիշտ լինի, այնուամենայնիվ նրանք նկատելիորեն տարբերվում են ցանկային կամ ցուցակային բնութիւն մատենագիտութիւնից։ Ուստի և կազմվեց Հայ գրքի և մամուլի պատմութիւնը անսկզբին, որը թվով չի նշուողով է։

Սվայայնպէս, ներկա ձեռնարկը բաղկացած է չինգ բաժնից եւ իրացված է ժամանակ անվանացանկով, ինչպէս և վերնագրերի ու ժամանակագրական ցանկերով։ Բաժնիներէից ամեն մեկը իր կառուցվածքն ունի՝ կազմված ներկայացվող նյութերի առանձնատեսութիւններէ ՚նետ։

Բաժնիները բաղկացած են գլուխներէից (կամ մասերից)։ Այսպէս, Ընդհանուր մատենագիտութիւնը բաժնի առաջին գլուխն է Ընդհանուր մատենագիտական ցանկեր և պարբերականներ, որը երկու մասից է բաղկացած՝ առանձին գրքերով մատենագիտական ցանկեր և մատենագիտական պարբերականներ։ Ըստ որում առաջինի մեջ նյութերը դասավորված են ժամանակագրական կարգով, երկրորդում՝ ըստ պարբերականների։ Նյութերի ժամանակագրական կարգ է սահմանված նաև չափորոշման մատենագիտական տեղեկութիւններ տարեկան հրատարակութիւններէ գլխում։

Պարբերական մամուլի մատենագիտութիւնը ներկայացված է երեք մասով՝ Առանձին գրքերով, Մամուլում (ու ներգրկային), Տարեգրքեր, առաջին երկու մասի ներսում այրբնական կարգ է սահմանված։

Ճշուգային մատենագիտութիւնը բաժնում ստեղծված են գլուխներ ըստ բնագավառների։

Քանի որ հայերեն ճշուգային մատենագիտական ցանկերի մեջ հասարակական գիտութիւններին նվիրված գրականութիւնը ներկայացնող ցանկերը մի բանի անդամ շատ են բնական և տեխնիկական գիտութիւնների գրականութիւն ցանկերից, ուստի ճշուգային մատենագիտութիւնը բաժնի առաջին

մեծ մասը բաղկացած է հասարակական գիտությունների ցանկերն ընդգրկող գլուխներից: Յուրաքանչյուր այդպիսի գլխում նյութը դասավորված է այրբնական կարգով:

Ճյուղային մատենագիտական. այն ցանկերը, որոնք վերաբերում են երկու կամ ավելի բնագավառների, լրացուցիչ կերպով արտացոլված են համապատասխան գլուխներում:

Անհատական մատենագիտություն բաժնում նյութերը դասավորված են ըստ հասարակ՝ ըստ այն անհատների ազգանունների այրբենի, որոնց նվիրված են մատենագիտական ցանկերը:

Գրացուցակների բաժնում կիրառված է անունների այրբենական կարգ, այսինքն՝ գրացուցակները խմբավորված են ըստ գրադարանների, գրատների և հրատարակչությունների անունների այրբենական կարգի:

Ջեռագրացուցակներ գլխում նյութը նախ երեք մասի է բաժանված՝ ըստ ձեռագրացուցակների հրատարակության հիմնական լեզվի՝ հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով ցուցակներ: Հայերեն ձեռագրացուցակները երեք խմբի են բաժանված՝ Առանձին զբերով հրատարակված, Պարբերական մամուլում և ներգրգային: Յուրաքանչյուր մասում նյութերը այրբենական կարգ ունեն: Մատենագիտական աշխատություններին նվիրված գրախոսականները (եթե նրանք մի քանի հատ են) դասավորված են ժամանակագրական կարգով:

Նյութերի դասավորումը երկրորդ ստտիճանի մատենագիտության մեջ, պետք է ասել, որ այնքան էլ դյուրին գործ չէ և որքան էլ մարդ զգույշ լինի ու բժախնդիր, միևնույն է, անճշտություններ ու սխալներ կսպրդեն:

ԼՐԻՎ Է ԱՐԴՏՈՔ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Մատենագիտական ցանկը կարող է լրիվ լինել, եթե այն ընդգրկում է մի կոնկրետ գրական հավաքածու՝ որևէ դրադարանի գրքեր կամ որևէ հրատարակչության արտադրանք:

Գրանք տպագրիւ կամ բարձրալին գրաքննարկներն են (կատարողները) 1:

Բայց նույնիսկ այդ ցանկերն էլ մեծ մասամբ լրիվ լինելու հավանականութուն չեն ունենում:

Ինչ վերաբերում է այն մատենագիտությանը, որը նվիրված է այս կամ այն հարցին, գիտության ճյուղին, որն է գիտնականի կամ գրողի և կամ որն է լեզվով լեզած գրական ընդհանուր արտադրանքին, ապա անկասկած է, որ նման մատենագիտական ցանկերը Լուրմի լիակատար լինել չեն կարող. այսինքն՝ այդպիսի մատենագիտությունը երբեք ի վիճակի չի լինում ամբողջությամբ ընդգրկել այն, ինչ վերաբերում է իրեն: Մատենագիտական ցանկերի առաջաբաններում սովորաբար կազմողները խոսում են այդ մասին:

Մատենագիտները, իհարկե, ջանքեր են թափում առավելագույնն ընդգրկելու համար և որքան ավելի է դա նրանց հաջողվում, այնքան մեծանում է նրանց աշխատության արժեքը:

Կրկնակի ղեկավար է նյութի ամբողջական ընդգրկումը երկրորդ աստիճանի մատենագիտության մեջ, երբ ընդգրկվույր իրենք մատենագիտական ցանկերն են: Նախ ամեն մի ցանկ չէ, որ կարող է տեղ գտնել այսպիսի մատենագիտության մեջ: Վերը արդեն թվարկեցինք գրականության ցանկերի այն տեսակները, որոնք որպես ոչ կարեւոր հարմար շահամարվեցին ներկա ձեռնարկի մեջ գրվելու: Կարելի է հիշել նաև ուրիշները: Օրինակ, դպրոցական և բուհական ծրագրերում, հեռակայողների առաջադրանքներում, լրագրերի մեջ, հանդեսների և գրքերի շապիկներին ու այլուր միշտ էլ լինում են գրականության փոքր ցուցակներ: Ի՞նչ կատեղծվի, եթե դրանք բոլոր

1 Սովորական իմաստով մատենագիտությունը (բիրլիոգրաֆիան) չի ընդունում ընդգրկվող գրականության սահմանափակում կապված տվյալ հավաքածուի կամ հրատարակչության տրտադրանքի և կամ պահեստում հավաքված գրքերի կանխորոշ քանակի հետ: Այդ պատճառով նման սահմանափակություն ունեցող ցուցակները վերնագրվում են ոչ թե մատենագիտություն, այլ՝ գրալուսակ (կատալոգ): Թեև, իհարկե, ի վերջո գրաքննարկներն էլ մատենագիտության մի տեսակն են:

նշվեն երկրորդ աստիճանի մատենագիտության մեջ, — միայն ավելորդ ծանրաբեռնվածութիւն և շփոթ, ուր կարևոր մատենագիտական գործերը կկորչեն անկարևորներին անվերջ բազմության մեջ:

Այդպիսով, երկրորդ աստիճանի մատենագիտության մեջ զրականության որոշ կարգի ցանկեր չեն ներկայացվում, եթե կարելի է ասել, դիտմամբ, նրանց անկարևորութիւն և ուրիշ պատճառներով:

Միաժամանակ միշտ չէ, որ հեշտ է կարևորի ու անկարևորի սահմանը որոշել և այստեղ որոշ բացթողումներ հնարավոր են:

Սակայն մատենագիտական աշխատանքում ամենից «վերտանդավոր» բացթողումներն ու վրիպումները այլ կարգի են լինում: Նրանց գլխավոր պատճառներն են շիմանալը և անուշադրութիւնը: Մի դեպքում մատենագետն ուղղակի շփոթի այս կամ այն կարևոր նյութի գոյութիւն մասին, որի հետևանքով և այն դուրս է մնում ցանկից: Պատահում է նաև, որ որոշ կարևոր նյութեր դուրս են մնում մեքենալորեն՝ նախնական քարտարանից դուրս ընկնելու, մեքենագրելիս բաց թողնելու և այլ պատճառներով:

Տարբեր կարգի վրիպումներ կլինեն նաև ներկա ձեռնարկում¹, մանավանդ, որ նրա պատրաստման և հրատարակման ժամկետը սահմանափակ էր և առանց այն էլ նշանակվածից ավելի քան մի տարի ուշ է ավարտվել կազմումը: Իսկ նյութեր հավաքելու պատճառով անվերջ ուշացնել մատենագիտութիւն հրատարակումը անիմաստ է, քանի որ ճիշտ չէ պակասի

1 Ներկա ձեռնարկում թերի պիտի լինի գրադարանային և հրատարակչական գրացուցակների բաժինը (մասնավորապես հնարավոր շեղված ձեռքի տակ ունենալ արտասահմանում լույս տեսած մի շարք գրացուցակներ): Մատենագիտութիւնից դուրս մնացած կլինեն նաև սրտ ճյուղային ցանկեր, որոնք տպագրվել են տարբեր գրքերի կից (նիրգրային) կամ պարբերականների մեջ, քանի որ մի քանի հրատարակութիւններ տարբեր պատճառներով հնարավոր չի եղել մտերամասն նայել: Բայց ամեն դեպքում պետք է տարբերել վրիպածը այն նյութերից, որոնք թեև ձեռքի տակ կղել են, բայց չեն նշվել ձեռնարկում:

պատճառով անվերջ ուշացնել անհրաժեշտն ունենալը, Սովետաբար նման մատենագիտությունները հրատարակվելուց սրով ժամանակ անց լրացվում են դուրս մնացած էջերը բնոգրկող պահներով:

Այն մատենագիտական ցանկերը, որոնք պետք է լինեն ներկա ձեռնարկում. բայց տարբեր պատճառներով դուրս են մնացել. ինչպես և առաջիկա տարիներում լույս բնծայվելիք մատենագիտական ցանկերն ու աշխատությունները կհավաքվեն Ա. Մյասնիկյանի անվան գրադարանի Տեղեկատու-մատենագիտական բաժնի հայագիտական բաժանմունքում և հետագայում կհրատարակվեն մի լրացուցիչ պրակով:

Անչափ ցանկալի է, որ ներկա մատենագիտությունից շատ մասերը նկատված պակասների մասին տեղեկացնեն բաժնին՝ Նրեան, Տերյան, Դ. Տեղեկատու-մատենագիտական բաժին (բաժնի վարիչ Եվգինե Սարգսյան):



Ներկա մատենագիտություն համար նյութերի հավաքումը ղաղարկեցված է 1963 թ. մարտի 31-ին, Տպագրության բնթացքում տրված են նոր լույս տեսած ցանկերի մի բանի լրացում միայն:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Թերևս ոչ մի բնագավառում այնքան ուժեղ չի զգացվում հայոց լնզվի երեք ուղղագրություն ունենալու անհարմարությունը, որքան մատենագիտության մեջ:

Գոյություն ունի մատենագիտական կանոն, որ բնղուսված է ամբողջ հոսքի դրոշմի Միության մեջ, այն է. «Տպագիր երկի նկարագրությունը կատարվում է ժամանակակից՝ նոր ուղղագրությամբ, անկախ զրբի ուղղագրությունից»¹: Հայերեն

¹ Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոններ ոչ մեծ գրադարանների և քրիստոգրաֆիական ցանկերի համար. Ե., 1955, էջ 13:

գրքերի համար այս կանոնը մասնավորելով կստացվի, որ նրանց մատենագիտական նկարագրութեան ժամանակ ճշկատի շեն առնվում հին և մինչև 1940 թ. օգոստոս ամիսը կիրառվող ուղղագրութունները»¹։

Այս կանոնը քմահաճորեն հնարված ինչ-որ բան չէ։ Սա աշխատանքի ու փորձի ընդհանրացման վրա է կառուցված։ Իրոք, չէ՞ որ մատենագետը տվյալ լեզվով գրքերի մատենագիտութուն է կազմում, նկարագրում է գրքերն ու հոգվածները՝ ժամանակակից ընթերցողին ներկայացնելու համար և ոչ թե տիտղոսաթերթի պատճեններ է հանում։ Զի կարելի ստրկանալ անցյալի հրատարակչությունների հին ուղղագրությանը կամ ուղղագրական սխալներին։ Տարբեր լեզուներով բազմաթիվ մատենագիտական ցանկեր են լույս տեսնում այս կանոնի կիրառմամբ և առանձին դժվարություններ չեն առաջանում։ Մինչդեռ հայերենում այդ կանոնի կիրառումը մատենագետի մտքի անվերջ տառապանքի պատճառ է դառնում։ Բանն այն է, որ հայերենի համար մասնավորեցված վերոհիշյալ կանոնը վերաբերում է միայն աշխարհաբար՝ (աբևելաբար և աբևմբրաբար) հրատարակված գրքերին։ Գրաբարը (ինչպես և միջին հայերենը) դիտվում է առանձին լեզու, և գրաբար գրքերը ըստ այդ կանոնի նկարագրվում են գրաբարյան, այսինքն՝ հին ուղղագրությամբ։

Այստեղից էլ սկսվում են դժվարությունները, ծագում են բազմաթիվ հարցեր, որոնք անպատասխան են մնում։ Օրինակ, ինչպե՞ս պետք է վարվել, երբ գիրքը գրված է աշխարհաբարացված գրաբարով կամ նրբ գրքի մի մասը գրաբար է. մյուսը՝ աշխարհաբար, եթե գրքի վերնագիրը մաքուր գրաբար է, իսկ ներսի լեզուն աշխարհաբար և այլն։

Ահա մի երկու օրինակ ներկա ձեռնարկից. «Յուրակ հայերէն ձեռագրաց ի թալաս», «Ձեռագիրք Կեսարիոյ վիճակին վանօրէից. Ա. Սկեղեցեաց և անհատից սեփական», — սրանք այնպիսի ցանկերի վերնագրեր են, որոնց ներսում նախաբանը, ծանոթութունները և հեղինակի ողջ գրածը աշխարհա-

¹ Նույն տեղում։

բար է: Բ՛նչ անհի, գուտ գրաբար այսպիսի վերնագրերը նոր ուղղագրութիւնը գրել:

Կան վերնագրեր էլ, որոնք լրիվ գրաբար չեն, որինակ, «Լիակատար ցուցակ գրկերու Սրբոյ Յակոբեանց տպարանին», «Յանկ սուրբ գրոց և ուրիշ գրեանց զանազան լեզուներով» և այլն: Ինչպե՞ս վարվել այսպիսի դեպքերում, երբ գրաբար վերնագրում աշխարհաբար ձևեր կան:

Երբեմն միևնույն հրատարակութեան գրացուցակը մերթ գրաբար, մերթ կիսագրաբար, մերթ էլ աշխարհաբար վերնագրով է հրատարակվում, ինչպես, որինակ, «Յուցակ գրոց տպագրելոց Մխիթարեան միաբանութենէ» (1879), «Յուցակ գրոց Մխիթարեան տպարանին» (1888), «Լիակատար ցուցակ գրկերու Մխիթարեան տպարանի» (1910), «Վեներական Մխիթարեան նոր հրատարակութիւններ» (1913):

Ինչպե՞ս վարվել այս և բազմաթիվ ուրիշ դեպքերում. ե՞րբ փոխել և երբ պահպանել հին ուղղագրութիւնը: Ըստ երևույթին, ինչ-որ շափով իրավացի են այն մատենագիտները, որոնք հայերեն գրքերի նկարագրութեան համար վերահիշյալ մատենագիտական կանոնի կիրառումը պարտադիր չեն համարում: Համենայն դեպս, այժմ զգացվում է հայերեն գրքերի նկարագրութեան համար մանրամասն մշակված կանոնների բացակայութիւնը:

Ներկա ձեռնարկում որոշ հրատարակութիւնների վերնագրերի ուղղագրութիւնը պահպանվել է. հաշվի առնվելով նրանց հրատարակման ժամանակը, վերնագրի գուտ գրաբար լինելը և այլն: Վերնագրերում աշխարհաբար ձևերի առկայութեան դեպքում, ինչպես և բոլոր աշխարհաբար վերնագրեր ունեցող գրքերը անկախ հրատարակման ուղղագրութիւնից նկարագրված են այսօրվա ուղղագրութեամբ:



Մատենագիտութիւն կազմելու դժվարութիւնները կարող է հասկանալ միայն նա, ով անձամբ պրազվել է այդ գործով: Կա առհասարակ տանջուի գործ է, Ա. Ղազիկյանի խոսքով ասած, «դժնդակ աշխատութիւն»:

Ինչ վերաբերում է երկրորդ աստիճանի հայկական մատենագիտությանը, ապա այն մեզանում կազմվում է առաջին անգամ և իր հետ առաջին անգամ է բերում նախկինում չհաղթահարված դժվարություններ: Նրա կազմողները՝ Հանրային գրադարանի տեղեկատու-մատենագիտական բաժնի աշխատողներ՝ Մ. Բարայանը, է. Հովհաննիսյանը, Ս. Ավագյանը, Խ. Ղուկասյանը և խմբագիրը շանք շեն խնայել մատենագիտությունը հնարավորին չափ հարուստ դարձնելու, նյութերը ճիշտ նկարագրելու և նպատակահարմար դասավորելու գործում: Իսկ եղած անճշտությունների համար հարկ է ասել մեր հին գրիչների ու տպագրիչների խոսքով. «եներել, քանզի կար մեր այսչափ բաւեց»:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՛ ԲԻՐԼԻՈԳՐԱՖԻԱ

Այս երկու բառերն էլ միևնույն նշանակությամբ հայերենում գործածվում են: Նախկինում ավելի շատ առաջինն էր գործածական, հետո սկսեց օգտագործվել երկրորդը, այժմ նորից ասպարեզ է մտնում մատենագիտություն¹ը, թեև բիրլիոգրաֆիան նույնպես շարունակում է զուգահեռաբար գործածվել:

Հասկանալի է, որ երբ մի լեզու որևէ իմաստ արտահայտելու համար ունի սեփական բառը, շպետք է դիմի մի այլ լեզվից համապատասխան բառի փոխառության: Այդպիսի փոխառությունն անիմաստ է: Տվյալ դեպքում մատենագիտություն բառը հայերենում մեծ հաջողությամբ կատարել է կատարում է եվրոպական լեզուներում գործ սծվող բիրլիոգրաֆիա-ի դերը, անհասկանալի է, ի՞նչ իմաստ ունի շարունակել այդ վերջինից կառչել: Պետք է հրաժարվել նրանից, ինչպես և հայերենում նույնանիշ ունեցող ամեն մի օտարամուտ բ. ր. ուրից²:

1 Թվում է, որ գրադարանային և մատենագիտական անվանումների մեջ ժամանակն է միտրինակություն մտցնել և աշխատել հրաժարվել այնպիսի օտարամուտ բառերի օգտագործումից, ինչպիսիք են կատալոգ, շիֆր, ինդեքս, ասպրիկա, ֆոնդ, ստելաժ և այլն, որոնք մեծ մասամբ ունեն հայերեն զուգահեռներ, իսկ լուսնեցողների համար դժվար չէ ստեղծել:

Մատենագիտություն և բիրլիոգրաֆիա բառերի հարցը ուշադրություն է գրավում նաև այն պատճառով, որ նույն բնագավառի գործածական ուրիշ բառեր կազմվում են և՛ մեկից և՛ մյուսից, որով ստեղծվում են ավելորդ գույաճաններ, ինչպես՝ մատենագետ և բիրլիոգրաֆ, մատենագիտական և բիրլիոգրաֆիական (բաժին, ցանկ, աշխատանք և այլն):

Ոմանք մատենագիտություն բառի օգտագործմանը առարկում են՝ պատճառաբանելով, որ այն բիրլիոգրաֆիա-ի (bibliographie կամ библиография) բառացի թարգմանությունը չէ:

Իրոք, որ թարգմանությունը բառացի չէ, ավելի ճիշտ, դա թարգմանություն էլ չէ, այլ ուղղակի համապատասխան հասկացողությունը հայերեն արտահայտելու նպատակով շրջանառության մեջ մտցված բառ: Եվ հենց դա է լավը:

Ո՞վ ասաց, որ բնույունելի էն միայն այն բառերը, որոնք թարգմանությամբ են ստեղծվում և ստուգարանորեն համապատասխանում են օտար լեզվի նույնանիշին: Ըիշտ հակառակը, այդ բնույթի բառերից ավելի պետք է խուսափել: Ամեն լեզու իր ավանդների և բառալին ատաղծի հիման վրա պետք է ստեղծի օւ շրջանառության մեջ ղնի անհրամեչտ բառեր ու անվանումներ և աշխատի ավելի րիշ թարգմանել կամ պատճենահանել օտար բառերը:

Տվյալ ղեպքում բիրլիոգրաֆիա-ն հունարեն գիրք և գրել (biblion և grapho) բառերից է կազմված, հայերեն բառացի թարգմանությունը պիտի լիներ մատենագրություն կամ գրագրություն: Եվ ժամանակին այդպես թարգմանելու փորձեր արվել են ¹: Սակայն բիրլիոգրաֆիային մատենագրություն կամ գրագրություն ասելը անընդունելի է հայերենի համար, քանի որ մատենագրություն նշանակում է որևէ

¹ Սրինակ, բիրլիոգրաֆիա-ն մատենագրություն է թարգմանվում ինտելյալ բառարաններում, Մ. Ջախլախյուն Բառարան յիտալական լեզուէ ի հայ և ի տառիկ բարբառ, Վենետիկ, 1801, 2. Ավգլերուն Բառարան համառոտ ի գաղղիականէ ի հայ, Վենետիկ, 1812, 1. Изабумян Исаианъ русско-армянскій словарь. Тифлис, 1906 և այլն:

գրված բան, գրականութուն, վերջերս՝ հայ ճին գրականու-
թյուն, իսկ գրագրություն կհասկացվի գիրք գրել:

Քիբլիոգրաֆիա-ի դիմաց հայերեն փորձել են գործածել
ևսև այլ բառեր (սովետագրություն, մատենախոսություն և
այլն), սակայն ամենից հարմարը մատենագիտություն բառն
է¹, որը հատկապես գերակշռութուն ստացավ իր զուգահեռ-
ների նկատմամբ, երբ Գ. Զարհանայանը իր մատենագի-
տության վրա գրեց ֆրանսերեն Bibliographie arménienne
և նրա տակ հայերեն՝ Հայկական մատենագիտություն վեր-
նագրերը:

Ոմանք ասում են, թե մատենագիտություն ասելով հաս-
կացվում է գրագիտություն: Ներկայումս, իրոք որ, գրագի-
տությունը գիտության ինքնուրույն ճյուղ է, որ այլ լեզուներ
ում կոչվում է բիբլիոլոգիա, ռուսերեն книговедение: Մա-
րնդհանուր գիտություն է գրքի վերաբերյալ, նրա հրատարակ-
ման, ձևավորման, պատմության մասին և այլն: Բայց գրքա-
գիտությունը հայերենում կարելի է հենց այդպես էլ կոչել
(կամ գուցե՝ գրաբանություն), իսկ մատենագիտություն-ը
բավական կայունացած իմաստ է ստացել և ավելի քան հար-
յուր տարի է, ինչ գործածվել է բիբլիոգրաֆիա-ի իմաստով:
Եվ սխալ է ամեն դեպքում բարդ բառերն ըմբռնել ստուգաբա-
նորեն, տվյալ դեպքում՝ մատյան (գիրք) և գիտություն: Եթե
այդպես ստուգաբանորեն ըմբռնենք հայերեն և այլ լեզուների
ամեն մի բարդ բառ, ապա կատարյալ խառնաշփոթություն
կստեղծվի: Այդ կարգի բարդությունները ինքնուրույն բառեր
են, իրենց ինքնուրույն իմաստով²:

Ընդհատ է, մատենագիտություն բառը ներկայումս փոքր-ինչ
ավելի լայն իմաստ ունի, քանի բիբլիոգրաֆիա-ն, բայց մի՞թե

¹ Մատենագիտություն բառը հին է և շատ բառերի նման ունեցել է
իր իմաստային զարգացումը: 5-րդ դարից կա գործածված մատենագետ ձևը
գրքերի գիտակ իմաստով, 19-րդ դարի առաջին կեսից մատենագիտություն-ը
սկսել է գործածվել ևսև բիբլիոգրաֆիայի իմաստով:

² Պետք է հիշել, որ բիբլիոգրաֆիա բառն էլ ռուսերենում և մյուս եվ-
րոպական լեզուներում այժմ ստուգաբանորեն (բառացի) չի ըմբռնվում
(գիրք և գրել իմաստով):

պարտ .դիր է, որ տարրեր լեզուների մեջ նույն իմաստն ար-
տահայտող բառերը իմաստային լայնություններով, ընդգրկմամբ
լիովին նույնը լինեն: Ո՛չ բնավ: Այստեղ դարձյալ գալիս է
յուրաքանչյուր լեզվի ինքնուրույն բնույթի. բառագիտական և
իմաստարանական ինքնուրույն ավանդների շարքը: Տվյալ
դեպքում մատենագիտություն բառի ուժի լայն իմաստը ոչ
թե բացասական, այլ դրական երևույթ է: ԶԷ՝ որ դա բնավ չի
խանգարում, որ մատենագիտությունը ամբողջությամբ ընդ-
գրկի նաև բիրլիս, րաֆիա-ի իմաստը, լիովին նշանակի բիր-
լիսգրաֆիա: Իրոք, այսօր մատենագիտություն նշանակում է
ա) գրքերի, հրդ. սծների, պարբերականների և այլ տպագիր
կամ ձեռագիր երկերի (երբեմն նաև կինոֆոնոգրամների, կեր-
պարվեստի նյութի) ցուցակներ, ցանկեր, ուղեցույցներ, տե-
սություններ: Որոշ դեպքերում խոսքը վերաբերում է այնպիսի
ցանկերի, որ լուրերի արտաքին նկարագրությունից բացի
տրվում են նաև ծանոթություններ նրանց բովանդակության,
ընթերցողական հատկացվածության, արժանիքների և թերու-
թյունների մասին: Բ) Գիտության բնագավառ, որը զբաղվում
է հիշյալ ցանկերի և ուղեցույցների կազմման, ինչպես և
տեղեկատու-մատենագիտական աշխատանքի կազմակերպ-
ման կանոնների և միջոցների ուսումնասիրությամբ ու մշակ-
մամբ: Գ) Երբեմն այդ բառով նշվում են պարբերականներում
քննադատության և գրախոսության բաժինները:

Այս նույն նշանակություններն ունի ներկայումս նաև
բիրլիսգրաֆիա բառը: Բայց հայերեն մատենագիտությունը
կարող է զործածվել նաև ուրիշ իմաստային երանգներով, այս-
պես, մատենագիտություն ինչ-որ շարքով նշանակում է նաև
գիրք իմանալը, ճանաչելը, ինչպես, որ մատենագետը բիրլիս-
գրի ֆ նշանակելուց բացի ունի նաև զիրուր լավ լիմացողի
իմաստ: Մատենագիտություն բառի տակ մի փոքր հասկաց-
վում է նաև գրքի պատմություն, ինչ-որ շարքով՝ աղբյուրագի-
տություն, եվ դա լավ է: Իսկ շփոթություն չի կարող լինել,
քանի որ այդպիսի բազմիմաստ բառերը (որոնցից ամեն մի
լեզու շատ ունի) յուրաքանչյուր դեպքում իմաստով կոնկրետ-
տանում են զործածության մեջ: Վերջին տարիներս մի շարք

ցանկերի ու աշխատութիւնների վերնագրերում, առաջարաններում հմտութիւնը գործածվում են մատենագիտութիւն, մատենագիտութեան բառերը տարբեր ձևերով (կարելի է համարակործան գործածել նաև հոգնակին՝ մատենագիտութիւններ, բոլոր հորովներով): Բառը և նրա ձևերը լեզվի մեջ սովորական են դառնում շատ գործածվելով:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Վերջերս խորհրդային մատենագիտական և գրադարանագիտական մամուլում հաճախ է խոսվում ընթերցողների մեջ մատենագիտական գիտելիքների պրոպագանդի մասին և մասնավորապես երկրորդ աստիճանի մատենագիտութիւնն ստեղծելու վերաբերյալ: 1960 թվականից ողջ Միութիւնի մեջ երկրորդ աստիճանի մատենագիտութիւն կազմելու մեթոդական ղեկավարութիւնը հանձնարարված է Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանին (Լենինգրադ): Հարուստ փորձ ունեցող այդ գրադարանը ստեղծել է երկրորդ աստիճանի մատենագիտութիւն կազմելու գիտամեթոդական միավորում, որը հրապարակում է մեթոդական նյութեր, հրավիրում խորհրդակցութիւններ՝ օգնելու համար երկրի մյուս գրադարաններին երկրորդ աստիճանի մատենագիտական ցանկեր ստեղծելու գործում:

Վերջին տարիներս խորհրդային Միութիւնի խոշոր գրադարաններից մի քանիսը հրատարակել է երկրորդ աստիճանի մի շարք արժեքավոր մատենագիտութիւններ: Ամենից առաջ պետք է նշել Համամիութենական գրապալատի (Մոսկվա) կողմից հրատարակվող «Библиография советской библиографии» պարբերականը (տարեկան մեկ անգամ), ուր ընդգրկվում են ողջ Միութիւնի մեջ տարբեր լեզուներով լույս տեսնող մատենագիտական գանազան բնութի հրատարակութիւնները:

Առանձին գրքերով լույս տեսած երկրորդ աստիճանի մատենագիտական ցանկերից նախ ուշադրութիւն են գրավում Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանի հրատարակութիւն-

ները¹, որոնք գիտական աշխարհի կազմից բնագունվեցին գոհունակությամբ և նրանցից մի քանիսը մամուլում արժանացան բարձր գնահատականներին:

Այս բնագավառում նշանակալից է նաև ՍՍՏՄ Պիտու-թյունների ակադեմիայի Կենտրոնական գրադարանի կատարած դերը: Վերջին տարիներս այդ գրադարանի կազմած երկրորդ աստիճանի մի քանի մատենագիտական ցանկեր լույս ընծայվեցին միութենական ակադեմիայի հրատարակչության կողմից²: ՍՍՏՄ Պիտու-թյունների ակադեմիայի ուսն գրականության ինստիտուտը 1951-ին հրատարակեց Ա. Ս. Պուլկինին եվիրված մատենագիտական ցանկերի մատենագիտությանը³, ուր ի մի են բերվում բանաստեղծի գործերին ու նրա մասին եղած գրականությանը եվիրված մատենագիտական բոլոր կարևոր աշխատությունները:

Երկրորդ աստիճանի մատենագիտության բնագավառում նկատելի աշխատանք են կատարել նաև ՍՍՏՄ Վ. Ի. Լենինի անվան պետական գրադարանը (ազգմական և հասարակական

¹ Сокурова И. В. Общие библиографии русских книг гражданском печати. 1708—1955. Л. 1956. 283 стр. Машкова И. В. и Сокурова И. В. Общие библиографии русских периодических изданий 1703—1954 и материалы по статистике русской периодической печати. Л. 1956. 136 стр. Кандель Б. Л. Путеводитель по иностранным библиографиям и справочникам по литературоведению и художественной литературе. Л. 1959. 441 стр. Гнучева В. В. Библиографии советской медицинской библиографии (1917—1957). Л. 1958. 118 стр. Гнучева В. В. Путеводитель по иностранным библиографиям периодической литературы. (1945—1936). Л. 1957. 108 стр. Зильберманец Л. В. Библиография советской технической библиографии. 1917—1959. Л. 1959. 505 стр.

² Лукашская А. М. Библиографические источники по математике и механике изданные в СССР за 1917—1952 гг. М.—Л. 1957. 351 стр. Կուլճի Բ. Основные иностранные библиографические источники по физике (1931—1955). М.—Л. 1959. 114 стр. Կուլճի Բ. Основные иностранные библиографические источники по математике и механике (1931—1957). М.—Л., 1960. 182 стр.

³ Добровольский Л. М. и Лавров В. М. Библиография пушкинской библиографии. 1846—1930. М.—Л. (1951). 68 стр.

քաղաքական գրականության մատենագիտության գծով)՝
Համամիութենական գրապատր (պատմական գրականու-
թյան մատենագիտություն)՝ 2 և Վ. Ի. Լենինի անվան Համա-
միութենական դրուդատնտեսական ակադեմիայի կենտրոնա-
կան գրադարանը՝ 3:

Միութենական հանրապետություններում այժմ աշխա-
տանք է սկսված յուրաքանչյուր հանրապետության ազգային
մատենագիտության մատենագիտությունը ստեղծելու ուղ-
ղությամբ՝ 4:

Երկրորդ աստիճանի մատենագիտությունը այսօր լրջորեն
գրադեցնում է նաև արտասահմանյան երկրների մատենա-
գետներին: Վերջին տարիներս մի շարք նոր, արժեքավոր հրա-
տարակույթյուններով լրացվեցին արտասահմանում առաջնե-
րում լույս ընծայված այդ բնույթի աշխատությունները: Ուշա-
դրության արժանի հրատարակություններ եղան, օրինակ, Լե-
հաստանում՝ 5, Հունգարիայում (ուր սկսեց առանձին պրակ-
ներով հրատարակվել ազգային մատենագիտության մատե-
նագիտությունը)՝ 6:

